

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՈՒՄ ԵՎ ԳԼՈՒԲԱԼԻԶԱՑԻԱ

Լ.Կ. Հակոբյան

Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան

ԱՄՓՈՓՈՒԳԻՐ

Հոդվածում ներկայացվում է ժողովրդավարացման ու գլոբալիզացիայի դերակատարությունը միջազգային անվտանգության համակարգում, որոնք սկզբնական շրջանում, ուղղված լինելով կայունության ու խաղաղության հաստատմանը, հետագայում խթանել են այնպիսի մարտահրավերների զարգացումը, ինչպիսիք են՝ պոպուլիզմը, կեղծ տեղեկատվությունը, ազգայնականությունը: Այնուամենայնիվ, նրանց հաջողվել է միջազգային անվտանգության համակարգի ուսումնասիրման միավոր դարձել մարդուն, որի անվտանգության ապահովումը կրում է համընդհանուր բնույթ բոլոր պետությունների համար:

Բանալի բառեր. ժողովրդավարացում, գլոբալիզացիա, միջազգային անվտանգություն, սպառնալիք, մարդու անվտանգություն:

Միջազգային հարաբերությունների համակարգում պարբերաբար ի հայտ են եկել տեսություններ և գաղափարաբանություններ, որոնք ուղղված են եղել հնարավոր մարտահրավերներին ու սպառնալիքներին դիմակայելուն և միջազգային անվտանգության ապահովմանը: Եթե 20-րդ դարում միջազգային անվտանգության ապահովումը դիտվում էր (լիբերալ) ժողովրդավարության շրջանակներում, ինչի վառ օրինակն են ժողովրդավարացման 3-րդ ալիքի գործընթացները¹, պետությունների քաղաքական վարչակարգի ընտրությունը հիմնվելով ժողովրդավարական խաղաղության տեսության վրա², նպատակ ունենալով հաստատել «հարատև» խաղաղություն³ միջազգային համակարգում, ապա արդեն 21-րդ դարում տեղի ունեցած

¹ Ըստ Սենյուել Հանթինգտոնի, ժողովրդավարացման ալիքների տեսությանն է ժողովրդավարացման երրորդ ալիքը սկսվել էր 1974թ.-ից և ներառում էր Լատինական Ամերիկայի, Ասիական-խաղաղօվկիանոսյան, Արևելյան Եվրոպայի և ենթա-Սահարական Աֆրիկայի պետությունները: Huntington S., *Democracy's Third Wave*, *Journal of Democracy*, № 2, 1991, pp. 13-34.

² Ըստ ժողովրդավարական խաղաղության տեսությանն լիբերալ ժողովրդավար պետությունները չեն պատերազմում միմյանց դեմ, ինչը երաշխավորում է նրանց միջև խաղաղության վիճակը: Pugh J., *Democratic Peace Theory: A Review and Evaluation*, *Center for Mediation, Peace, and Resolution of Conflict, International*, 2005, pp. 1-19.

³ Ըստ Իմանուիլ Կանտի միջազգային հարաբերությունների համակարգում հարատև խաղաղության հաստատումը հիմնված է լիբերալ-ժողովրդավար պետություններից կազմված դաշինքի վրա: Kant I., 'Perpetual Peace: A Philosophical Sketch' (1795), *Slought Foundation*, 2010, pp. 1-72.

զարգացումները ցույց տվեցին, որ ժողովրդավարցումը ու խաղաղության հաստատումը երկարատև գործընթացներ են և հաշվի առնելով միջազգային համակարգում առկա քաղաքակրթությունների (արժեքային համակարգերի) զանազանությունը չեն կարող կրել համաշխարհային բնույթ⁴: Արդյունքում, միջազգային հարաբերությունների համակարգում տարածում գտած ժողովրդավարական վարչակարգերը սկսեցին կրել տարբեր դրսևորումներ՝ լիբերալ ժողովրդավարությունից մինչև ոչ լիբերալ⁵ ու «ինքնիշխան» ժողովրդավարություններ⁶: Ավելին, թեև ժողովրդավարացումը շարունակում է տեղ գտնել պետությունների ներքին ու արտաքին քաղաքականությունների օրակարգում, այնուամենայնիվ, դրա իրագործման գործընթացներում պետությունների ոչ ճիշտ մշակած ռազմավարությունները (մասնավորապես աշխարհաքաղաքական գործոնի անտեսումը) հիմք են հանդիսանում պետական անվտանգության խոցելիությանը⁷: Արդյունքում, ժողովրդավարցումը, որը պետք է ուղված լիներ պետության քաղաքական համակարգի կայունացմանը և անվտանգության ամրապնդմանը, ինքն է

⁴ *Ըստ Սենյուել Գանթինգտոնի միջազգային հարաբերությունների համակարգում պետությունների միջև առկա հակամարտությունների հիմքում ընկած գաղափարախոսական տարբերություններին փոխարինելու են եկել մշակութաքաղաքակրթական տարբերությունները: Huntington S., The Clash of Civilizations? Foreign Affairs, № 3, 1993, pp. 22-49.*

⁵ *Ոչ լիբերալ ժողովրդավարություններում, ի տարբերություն լիբերալ ժողովրդավարությունների, գործում են ժողովրդավարական վարչակարգի համար անհրաժեշտ նվազագույն տարրերը (ընտրությունների անցկացում, մարդու իրավունքների ու ազատությունների մասնակի ապահովում): Zakaria F., The rise of Illiberal Democracy, Foreign Affairs, № 6, 1997, pp. 22-43.*

⁶ *Ըստ Վլադիսլավ Սուրկովի Ռուսաստանի ներկայիս քաղաքական վարչակարգը իրենից ներկայացնում է «ինքնիշխան» ժողովրդավարություն: Թեև հայեցակարգի սահմանում որոշ առումով անորոշ է, այնուամենայնիվ, այս հասկացությունը կենտրոնացած է երկու հիմնական գաղափարի շուրջ: Առաջինը ինքնիշխանության գաղափարն է, որի շրջանակներում հասկացվում է Արևմուտքի կողմից միջամտության բացառումը Ռուսաստանի ներքին գործերին: Երկրորդը ժողովրդավարությունն է, որի շրջանակներում ներկայացվում է Ռուսաստանի սեփական արժեքների համախումբը, որը բխում է Ռուսաստանի յուրաքանչյուր պատմական փորձից, և տարբերվում է նրանից, ինչը Արևմուտքը հասկանում է որպես ժողովրդավարություն: Popescu N., Russia's Soft Power Ambitions, Center for European Policy Studies, № 115, 2006, pp. 1-4.*

⁷ *Որպես օրինակ կարող ենք դիտարկել Վրաստանի և Ուկրաինայի ժողովրդավարացման գործընթացները, որի արդյունքում տեղի ունեցած տարածայնությունները աշխարհաքաղաքական դերակատարների հետ (մասնավորապես Ռուսաստանի) հանգեցրեցին Աբխազիայի ու Գարաբախի Օսիայի անկախացմանը և Դրիմի բռնակցմանը: Արդյունքում, ժողովրդավարացման գործընթացը տեղի ունեցավ ինքնիշխանության խոցելիության ու տարածքային ամբողջականության խախտման հաշվին:*

սկսում հանդես գալ որպես մի գործընթաց, որի իրագործումը պահանջում է լրացուցիչ անվտանգային երաշխիքներ: Ժողովրդավարացումը ըստ էության երկարատև ու բազմամակարդակ գործընթաց է և դրանով է պայմանավորված այն, որ ժողովրդավարական վարչակարգի հաստատմանն ուղղված պետությունների սկզբնական քայլերի հաջողությունը դեռևս չի նախատեսում ժողովրդավարական վարչակարգի ամրապնդում և կայունացում տվյալ պետություններում: Իրենց հերթին կայուն ժողովրդավարական վարչակարգ ունեցող պետությունները պարբերաբար կանգնած են լինում ժողովրդավարացման գործընթացների առջև, քանի որ կայուն ժողովրդավարությունը հարաբերական է և պարբերաբար պահանջում է բարեփոխումներ⁸: Հաշվի առնելով ժողովրդավարացման գործընթացների ու արդեն իսկ կայունե ժողովրդավարական վարչակարգերի խոցելիությունը (մասնավորապես մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները ապահովման հնարավոր ձախողումը), պետական անվտանգության համատեքստում սկսում է ի հայտ գալ նոր սպառնալիք՝ պոպուլիզմը: Պոպուլիզմի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ լինելով ավտորիտար վարչակարգերին բնորոշ երևույթ, այն կարողանում է նշանակալից դերակատարություն ստանձնել նաև ժողովրդավարական վարչակարգ ունեցող պետություններում: Պոպուլիզմը, ուղղված լինելով ժողովրդի շահերի ու ազատությունների պաշտպանությանը, առաջնորդվում է այն տրամաբանությամբ, որ մարդկանց ազատ կամքի արտահայտման ուղու վրա չպետք է լինեն որևէ արգելքներ (ընդհուպ մինչև օրենքների խախտումներ և չինազանդում)⁹: Ավելին, պոպուլիստները, կարևորելով պետություն-քաղաքացի անմիջական կապը, հակված են նվազեցնելու ինստիտուտների դերակատարությունը, որի արդյունքում հնարավոր է դառնում աղճատված կամ կեղծ տեղեկատվության (fake news) տարածումը¹⁰: Կեղծ տեղեկատվության տարածումը հանդիսանում է ներկայիս միջազգային անվտանգության մյուս

⁸ *Լինց Խ., Ստեփան Ա., Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները, Կովկասի ինստիտուտ, Երևան, 2001, էջ 26*

⁹ *Acemoglu D., Egorov G., Sonin K., A Political Theory of Populism, The Quarterly Journal of Economics, № 2, 2013, pp. 771–805*

¹⁰ *Որպես օրինակ կարող ենք դիտարկել Բրեքսիթը (որի ընթացքում մասնավորապես մուսուլման միգրանտների ներհոսքը ներկայացվում էր որպես սպառնալիք ազգային անվտանգությանը), ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի նախաձեռնությունը ԱՄՆ-Սեբսիկա սահմանին պատ կառուցելու մասին (որն ուղղված էր կանխելու ապօրինի միգրացիան ու քննամիջոցների ներկրումը):*

սպառնալիքը, մասնավորապես ժողովրդավար պետություններում, որտեղ առկա է մամուլի ու խոսքի ազատության բարձր մակարդակ: Ինչպես պոպուլիզմն ու ատելության խոսքը, այնպես էլ կեղծ տեղեկատվությունը կամ ապատեղեկատվությունը հնարավոր չէ ամբողջությամբ վերացնել ու վերահսկել, սակայն հնարավոր է սահմանափակել դրանց տարածումը սահմանելով որոշակի չափորոշիչներ, որոնց չհամապատասխանելը կհանգեցնի սահմանված պատժամիջոցների կիրառմանը¹¹:

Տնտեսական տեսանկյունից 20-րդ դարից ի վեր տարածում գտած գլոբալիզացիան, որը սկզբնական շրջանում հիմնվում էր տնտեսական համաշխարհայնացման գործոնի վրա, նպատակ ունենալով ստեղծել տնտեսական համակարգերի միջազգային ցանց, 21-րդ դարում նույնպես առերեսվեց մի շարք խոչընդոտների: Ի տարբերություն ժողովրդավարացման գործընթացներին, գլոբալիզացիան ավելի մեծ հաջողություններ է գրանցել, կարողանալով ստեղծել պետությունների միջև փոխկապակցվածություն և փոխկախվածություն, ինչը կարևոր գործոն է հանդիսանում միջազգային հավաքական անվտանգության համատեքստում¹²: Սառը պատերազմի ավարտից հետո միջազգային հարաբերությունների միաբևեռ համակարգը: ԱՄՆ-ի գլխավորությամբ, նպատակ ուներ համաշխարհայնացնել արևմտյան արժեքային համակարգը՝ հիմնվելով հեգեմոն տեսության վրա¹³: Ինչպես ժողովրդավարացման պարագայում, այնպես էլ գլոբալիզացիան չկարողացավ կրել համընդհանուր բնույթ, սակայն նպաստեց հակագլոբալիզացիայի կամ «արևելյան» գլոբալիզացիայի առաջացմանը¹⁴, ինչը հիմք դրեց ուժային հա-

¹¹ *Muller J., How Can Populism Be Defeated?, 2017, (43:20 – 43:52) <https://www.youtube.com/watch?v=v1PP2ulKRCs>, (05.06.2020).*

¹² *Ըստ հավաքական անվտանգության գաղափարի ցանկացած պետության վրա հարձակումը համարվում է հարձակում բոլոր մյուս պետությունների վրա, որոնք միասին հավաքական անվտանգության մաս են կազմում: Aleksovski S., Bakreski O., Avramovska B., Collective Security – The Role of International Organizations – Implications in International Security Order, Mediterranean Journal of Social Sciences, № 27, 2014, pp. 274-282.*

¹³ *Ըստ Ա. Պրանշիի առկա է քաղաքական վերահսկողության երկու տեսակ՝ գերիշխանություն, որը հիմնված է հարկադրանքի վրա և հեգեմոնիա, որը հիմնված է համաձայնության վրա (գերիշխող ուժի սեփական շահերն ու արժեքները վերափոխվում են դառնալով ընդհանուր բոլորի համար): Antoniadis A., From ‘Theories of Hegemony’ to ‘Hegemony Analysis’ in International Relations, 49th ISA Annual Convention, 2008, pp. 1-18.*

¹⁴ *Արևելքի կողմից գլոբալիզացումը հաճախ նույնացվում է արևմտացման հետ (ինչը սպառնալիք է Արևելյան արժեհամակարգի համար), քանի որ գլոբալիզացիայի հիմքում ընկած են արևմտյան քաղաքակրթությանը բնորոշ արժեքներ: Clement H., The clash of Globalisations in the Middle East, Oxford University Press, 2005, pp. 104-128.*

վասարակշռության¹⁵ և զսպունգների ու հակակշիռների մեխանիզմի ապահովմանը միջազգային հարաբերությունների համակարգում: Նման հակակշիռը մի կողմից նպաստեց «ճկուն» երկբևեռ համակարգի ստեղծմանը¹⁶, մյուս կողմից ընդլայնեց միջուկային զենք ունեցող պետությունների քանակը, որի արդյունքում պետությունների փոխադարձ անվտանգային սպառնալիքները ուղղված են փոխադարձ ուժային հավասարակշռմանը¹⁷: Սպառնալիքը «երաշխիք» դիտարկելը պայմանավորված է գլոբալիզացիայի ունեցած դերակատարությամբ, այն է պետությունների անվտանգային համակարգերը թեև, մեկուսացված են, սակայն այնքան են միահյուսված, որ յուրաքանչյուրի վտանգումը կնպաստի շղթայական ռեակցիայի տրամաբանությամբ ամբողջ հավաքական անվտանգության համակարգի խոցելիությանը¹⁸:

Եթե սկզբնական շրջանում կարևորվում էր ինստիտուտների դերակատարությունը վերահսկելու համար պետությունների վարքագիծը և համակարգելու հնարավոր տարածայնություններ՝ խուսափելու համար հնարավոր կոնֆլիկտների ընդարձակումից, ապա հետագայում ինստիտուտները սկսեցին խոչընդոտող դերակատարություն ունենալ միջազգային անվտանգության պահպանման գործընթացում¹⁹: Նման ձախողման հիմքում ընկած էր պետությունների ազգային շահերին առաջնային դերակատարություն տալը: Ազգայնականությունը, որն ուղղված է պետության ինքնիշխանության պահպանմանը ներքին ու արտաքին սպառնալիքներից,

¹⁵ Ըստ ուժային հավասարակշռության գաղափարի իշխանությունը պատկանում և իրագործվում է պետությունների կողմից, որոնց հավասարակշռում են իշխանություն ունեցող այլ պետություններ: Ընդ որում որևէ պետության կողմից գերիշխանության ձեռք բերումը ամնիջական սպառնալիք է մյուս պետությունների գոյատևման համար: Schweller R., *The Balance of Power in World Politics*, Oxford University Press, 2016, pp. 1-22.

¹⁶ Boulding K., *Theoretical systems and political realities: a review of Morton A. Kaplan, System and process in international politics*, *Journal of Conflict Resolution*, № 4, 1958, pp. 329-334.

¹⁷ Kratochvil P., *The Balance of Threat Considered: Construction of Threat in Contemporary Russia*, *The Fifth Pan-European Conference*, 2004, pp. 1-32.

¹⁸ Որպես օրինակ կարող ենք դիտարկել 2010թ.-ին տեղի ունեցած Արաբական գարունը, 2019թ.-ից տարածում գտած թագավարակը (COVID-19) և այլն:

¹⁹ Անվտանգության ապահովման համատեքստում ինստիտուտների ոչ արդյունավետ գործունեության օրինակ են 3ավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը, որը ըստ էության չի նպաստել անդամ-պետությունների միջև ռազմաքաղաքական և անվտանգային հարաբերությունների զարգացմանը, Միավորված ազգերի կազմակերպությունը (մասնավորապես Անվտանգության խորհուրդը) ձախողվել է իրականացնել կլիմայի փոփոխության դեմ արդյունավետ պայքար՝ ապահովելով բնապահպանական անվտանգություն և այլն:

խոչընդոտող դեր ունեցավ գլոբալիզացիայի տարածման վրա: Ընդորոմ, ազգայնականության վերելքը տարբեր ազդեցություն է ունենում պետությունների անվտանգության պահպանման վրա: Ի տարբերություն ոչ ժողովրդավար վարչակարգ ունեցող պետությունների, ժողովրդավար պետություններում (ծայրահեղ) ազգայնականությունը ավելի մեծ վտանգ է ներկայացնում պետական անվտանգությանը՝ հաշվի առնելով դրա վերահսկողության դժվարությունը ու երևան բերած հնարավոր անդառնալի հետևանքները²⁰: Անդրադառնալով միջազգային անվտանգության սպառնալիք ներկայացնող երևույթներին՝ ազգայնականություն, ռասիզմ, պոպուլիզմ (որոնք նոր սպառնալիքներ չեն, սակայն, ներկայումս ավելի մեծ տարածում են սկսել գտնել) անհրաժեշտություն առաջացավ վերափոխել (բայց չհրաժարվել) միջազգային անվտանգության ուսումնասիրման միավորը՝ ազգ-պետությունը (ազգ-պետության անվտանգության սպառնալիքները գալիս են մյուս ազգ-պետություններից), փոխարինելով այն անհատի անվտանգության (ապահովել բարեկեցություն ու բավարարել կարիքները) միավորով²¹: Մարդու անվտանգությունը, թեև լիբերալ ժողովրդավարության հիմնաքարն է, սակայն ներկայիս միջազգային անվտանգության շրջանակներում մարդու անվտանգության ապահովումը վեր է թե՛ վարչակարգ-գաղափարախոսական, թե՛ ազգայնական պատկերացումների տիրույթից: Այսինքն, մարդու անվտանգության ապահովումը անվտանգային հիմնախնդիր է բոլոր պետությունների համար անկախ իրենց զարգացվածությունից, արժեքային համակարգից և վարած ներքին ու արտաքին քաղաքականություններից: Մարդու անվտանգության ապահովումը տեղավորվում է գլոբալիզացիայի տրամաբանություն մեջ, այն է՝ մարդու անվտանգությունը համընդհանուր արժեք է և վեր է պետական սահմաններից: Միջազգային անվտանգության միավորի փոփոխությամբ (ինչը անվտանգային ոլորտների ընդարձակման հետևանք է)

²⁰ Որպես օրինակ կարող ենք դիտարկել 2020թ.-ին տեղի ունեցած աֆրոամերիկացի Ջ. Ֆլոյդի սպանությունը (որպես ռասիստական վերաբերմունքի հետևանք), որը հանգեցրեց շարունակական բողոքի ցույցերին, անկարգություններին՝ ուղղված ոստիկանության դաժանության և ռասիստական քաղաքականության դեմ: Սկսվելով ԱՄՆ Միներսոտա նահանգից ցույցերը ընդարձակվեցին ոչ միայն ԱՄՆ տարածքում, այլև տարածում գտան Եվրոպական որոշ երկրներում:

²¹ Security and Democracy, <https://www.minsait.com/ideasfordemocracy/en/security-and-democracy>, (05.06.2020)

է պայմանավորված նաև անվտանգությանը սպառնալիք ներկայացնող երևույթների վերափոխումը՝ համաճարակներ, աղքատություն, բնական աղետներ, մարդու իրավունքների խախտումներ ու բռնության կիրառում և այլն (նախկինում առաջնային տեղ էին զբաղեցնում հակամարտությունները, միջուկային զենքի տարածումը, քաղաքացիական պատերազմները և այլն)²²:

Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց տվեցին համաճարակային վերջին զարգացումները մարդու անվտանգության ապահովումը պետք է տեղի ունենա ներպետական մակարդակի վրա, որն էլ իր հերթին կհանգեցնի վերպետական մակարդակում խնդրի վերահսկողությանը: Վերահսկողությունն էլ իր հերթին հնարավորություն կընձեռնի կանխատեսելու այս կամ այն պետության վարքագիծն ու շարժառիթները, ինչպես նաև ինտեգրման պատրաստակամությունը միջազգային անվտանգության մակարդակում սպառնալիքների դեմ պայքարի գործընթացում²³: Ավելին, պետության զարգացվածության և անվտանգության բարձր մակարդակը դեռևս երաշխիք չեն հանդիսանում մարդու անվտանգության ու բարեկեցության ապահովման համար: Ուստի մարդու անվտանգության ապահովման ոլորտում հաջողություն գրանցած պետությունները հնարավորություն կունենան ձեռք բերել նոր կարգավիճակ միջազգային անվտանգության համակարգում: Ներպետական մակարդակով խնդրի կարգավորումը պայմանավորված է նրանով, որ մարդու անվտանգությանը սպառնալիք ներկայացնող երևույթները, համարվում են «փափուկ» սպառնալիքներ, որոնց կարգավորումը իրականացվում է սոցիալ-մշակութային, տնտեսական և իրավական գործիքների միջոցով առանց ռազմաքաղաքական ռազմավարություններին դիմելու (ինչը կիրառվում է «կոշտ» սպառնալիքների պարագայում)²⁴:

Այսպիսով, ժողովրդավարացման ու գլոբալիզացիայի գործընթացները

²² Թերևս հումանիտար օգնությունը շարունակում է իր դերակատարությունը մեծացնել պետությունների ազգային անվտանգության ռազմավարություններում: UN, *Transforming Our World: The 2030 Agenda for Sustainable Development*, <https://sustainabledevelopment.un.org/content/documents/21252030%20Agenda%20for%20Sustainable%20Development%20web.pdf>, (05.06.2020)

²³ Որպես օրինակ կարող ենք դիտարկել Դ. Թրամփի նախագահության օրոք ԱՄՆ-ի դուրս գալը Փարիզյան համաձայնագրից, պարբերաբար հնչող սպառնալիքները Առողջապահության համաշխարհային կազմակերպությունից դուրս գալու վերաբերյալ:

²⁴ Thomashausen S., *Addressing the 21st Century Threats to International Peace and Security*, *Fondation pour l'innovation politique*, 20

միջազգային անվտանգության համակարգում թեև ձախողել են վերպետական մակարդակով համընդհանրության ապահովմանը, սակայն, ներպետական մակարդակով կարողացել են ապահովել համընդհանուր անվտանգային խնդրի ձևակերպում՝ մարդու անվտանգությունը, ինչն էլ նպաստել է մի կողմից պետությունների կողմից անմիջական պատասխանատվության ստանձմանը պետական անվտանգության ապահովման համար, մյուս կողմից առանձին պետությունների անվտանգությունների հիման վրա կառուցել վերահսկելի ու կանխատեսվող միջազգային հավաքական անվտանգություն: Հավաքական անվտանգության բնույթն էլ փոփոխվում է այն ժամանակ, երբ դրա ներսում տեղի է ունենում դերակատարների կարգավիճակի փոփոխություն ըստ իրենց անվտանգության մակարդակի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լինց Խ., Ստեփան Ա., Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները, Կովկասի ինստիտուտ, Երևան, 2001, 619 էջ:
2. Acemoglu D., Egorov G., Sonin K., A Political Theory of Populism, *The Quarterly Journal of Economics*, № 2, 2013, pp. 771–805.
3. Aleksovski S., Bakreski O., Avramovska B., Collective Security – The Role of International Organizations – Implications in International Security Order, *Mediterranean Journal of Social Sciences*, № 27, 2014, pp. 274-282.
4. Antoniadou A., From ‘Theories of Hegemony’ to ‘Hegemony Analysis’ in International Relations, *49th ISA Annual Convention*, 2008, pp. 1-18.
5. Boulding K., Theoretical systems and political realities: a review of Morton A. Kaplan, System and process in international politics, *Journal of Conflict Resolution*, № 4, 1958, pp. 329-334.
6. Clement H., The clash of Globalisations in the Middle East, *Oxford University Press*, 2005, pp. 104-128.
7. Huntington S., Democracy’s Third Wave, *Journal of Democracy*, № 2, 1991, pp. 13-34.
8. Huntington S., The Clash of Civilizations? *Foreign Affairs*, № 3, 1993, pp. 22-49.
9. Kant I., ‘Perpetual Peace: A Philosophical Sketch’ (1795), *Slough Foundation*, 2010, pp. 1-72.

10. Kratochvíl P., The Balance of Threat Considered: Construction of Threat in Contemporary Russia, *The Fifth Pan-European Conference*, 2004, pp. 1-32.
11. Muller J., How Can Populism Be Defeated?, 2017, (43:20 – 43:52) <https://www.youtube.com/watch?v=v1PP2ulKRCs>, (05.06.2020).
12. Popescu N., Russia's Soft Power Ambitions, *Center for European Policy Studies*, № 115, 2006, pp. 1-4.
13. Pugh J., Democratic Peace Theory: A Review and Evaluation, *Center for Mediation, Peace, and Resolution of Conflict*, International, 2005, pp. 1-19.
14. Schweller R., The Balance of Power in World Politics, *Oxford University Press*, 2016, pp. 1-22.
15. Security and Democracy, <https://www.minsait.com/ideasfordemocracy/en/security-and-democracy>, (05.06.2020).
16. Thomashausen S., Addressing the 21st Century Threats to International Peace and Security, *Fondation pour l'innovation politique*, 2005, pp. 2-37.
17. UN, Transforming Our World: The 2030 Agenda for Sustainable Development, <https://sustainabledevelopment.un.org/content/documents/21252030%20Agenda%20for%20Sustainable%20Development%20web.pdf>, (05.06.2020).
18. Zakaria F., The rise of Illiberal Democracy, *Foreign Affairs*, № 6, 1997, pp. 22-43.

ДЕМОКРАТИЗАЦИЯ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Л.К. Акоюн

АННОТАЦИЯ

В статье представлена роль демократизации и глобализации в системе международной безопасности, которая первоначально, направленная на установление стабильности и мира, позднее способствовала развитию таких проблем, как популизм, ложная информация, национализм. Однако, им удалось превратить человека в единицу изучения системы международной безопасности, обеспечение безопасности которого является универсальным для всех государств.

Ключевые слова: *демократизация, глобализация, международная безопасность, угрозы, безопасность человека.*

DEMOCRATIZATION AND GLOBALIZATION

L.K. Hakobyan

SUMMARY

The article presents the role of democratization and globalization in the international security system, which initially, aimed at establishing stability and peace, later contributed to the development of challenges such as populism, false information, and nationalism. However, they managed to transform a person into a unit of study of the international security system, the security of which is universal for all states.

Keywords: *democratization, globalization, international security, threats, human's security.*